



Մագիստրոսական Ծրագիր ԿԱՅՈՒՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ծրագրի նպատակը

Հասարակության առջև ծառայած մերօրյա գլոբալ մարտահրավերներն, ինչպիսիք են պարենային անվտանգության, աճող ազգաբնակչության թեր- և գերսնուցման հիմնախնդիրները, պահաջում են ներառական և նորարարական լուծումներ: Այդպիսի լուծումներ կարող են մշակվել և ներդրվել այն մասնագետների կողմից, ովքեր արհեստավարժ են և ունեն կայուն զարգացման ու հատկապես կայուն գյուղատնտեսության վերաբերյալ բազմադիսցիպլինար գիտելիք և փորձառություն: Կայուն գյուղատնտեսությունն այս համատեքստում դիտարկվում է որպես մի համակարգ, որի նպատակն է ապահովել հասարակությանը սննդով և պարենով (թե որակական և թե քանակական առումներով) առանց վտանգելու վաղվա սերունդների ապագան և սահմանափակելու նրանց հնարավորությունները: Հետևաբար, գյուղատնտեսության ոլորտի մասնագետների առջև այսօր խնդիր է դրված ընկալել բարդ ագրոպարենային համակարգը, ունենալ ապագայի հստակ տեսլական և ի վիճակի լինել կազմակերպելու գյուղատնտեսության կայուն զարգացմանն ուղղված գիտելիքի ու նորարարություն ներդրման գործընթացը:

Պարենային անվտանգության ապահովում, կլիմայական փոփոխությունների կանխում, շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանություն, սննդամթերքի կայուն արտադրություն, վերամշակում և մատակարարում, բիոհիմքով հանքանյութի ու այլընտրանքային էներգիայի ստացում, բիոկենսատեխնոլոգիաների կիրառում. սրանք այն ռազմավարական թեմաներն են, որոնք մեր օրերում արդիական են ինչպես մասնավոր, այնպես էլ հանրային սեկտորի դերակատարների համար և որտեղ գիտելիքի, փորձառության ու նորարարությունների անհրաժեշտություն կա: Այս համատեքստում օր-օրի աճում է պահաջարկը ժամանակակից որակյալ այնպիսի մասնագետների հանդեպ, ովքեր կարող են կայուն գյուղատնտեսության զարգացման համակարգային լուծումներ ներդնել:

Մագիստրոսական այս ծրագրի նպատակն է որակավորել/կրթել և երկարաժամկետ միմյանց հետ կապել մասնագետների, ովքեր պատրաստ են գտնել նորարարական և ներառական լուծումներ գյուղատնտեսությունն ավելի կայուն դարձնելու և այդպիսով պարենային անվտանգության, կլիմայական փոփոխությունների և նմանատիպ արդիական մարտահրավերների հաղթահարման համար: Այդ նպատակով ծրագրի մասնակիցները մանրամասնորեն կուսումնասիրեն կայուն զարգացման երեք հիմնական ուղղությունները և գյուղատնտեսության վարման նորարարական



մոտեցումները, որի արդյունքում կկարողանան խրախուսել ու մեկտեղել առողջ շրջակա միջավայրը, տնտեսական աճը և սոցիալական համերաշխությունը: Ծրագիրը նպատակ ունի հզորացնել մասնակիցների ինչպես տեսական ու վերլուծական, այնպես էլ գործնական հմտությունները (այստեղ հետաքրքրական է Բրիտանական Ռոյալ գյուղատնտեսության համալսարանի համապատասխան փորձը): Թեմատիկ խորը հետազոտություններին զուգահեռ նրանք կներգրավվեն ՀԱԱՀ-ի գործընկերների պետական, մասնավոր և միջազգային գործնական ծրագրերում՝ ձեռք բերած գիտելիքն իրական փորձով համալրելու համար: Բացի այդ, մասնակիցները կսովորեն էմպիրիկ հետազոտության և գիտելիքի/նորարարության/տեղեկատվության տարածման տարբեր մեթոդներ, ինչպես նաև ակադեմիական տեքստեր կազմելու հմտություններ: Ծրագրի հիմնական բաղադրիչ է նաև մագիստրոսական աշխատանքի կազմումը, որի թեման ընտվելու է կայուն գյուղատնտեսության կոնկրետ խնդիր լուծելու նկատառումից ելնելով: Ներկայացվող մագիստրոսական ծրագիրը համապատասխան շրջանակ է առաջարկում համաշխարհային տենդենցներին համահունչ գործելու և ոլորտային մրցունակ մասնագետ դառնալու համար:

Նմանատիպ ծրագրերի համեմատական վերլուծություն

Ծրագրի առաջարկը կազմելու և դրա շրջանակը ձևավորելու նպատակով ուսումնասիրվել են աշխարհի առաջատար 10 բարձրագույն կրթական հաստատությունների նմանատիպ ծրագրեր: Ընտրվել են ամերիկյան, բրիտանական, իտալական, հունական և չեխական համալսարանների ծրագրեր՝ հետևյալ չափորոշիչներով.

- Ծրագրի անվանումը, վարկանիշը, նորարարությունը և յուրահատկությունը/ները,
- Դասավանդվող առարկաները, դրանց բովանդակությունը և տրամաբանական հաջորդականությունը, առարկաների բաշխումն ըստ կիսամյակների,
- Ֆինանսավորման և խրախուսման մեխանիզմները:

Համեմատական վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ նմանատիպ ծրագրերի մեծ մասի առանցքում կայունության երեք ուղղություններն են՝ շրջակա միջավայր, հասարակություն և տնտեսություն: Ստորև ներկայացվում են դրանք.



Նմանատիպ ծրագրերի համեմատական վերլուծության արդյունքները

Բարձրագույն կրթական հաստատությունը և երկիրը	Ծրագրի անվանումը, նորարարությունը և յուրահատկությունները	Դասավանդվող առարկաները, դրանց բովանդակությանը և տրամաբանական հաջորդականությունը	Ֆինանսավորման և խրախուսման մեխանիզմները
<p>1. Այովայի պետական համալսարան /ԱՄՆ</p> <p>https://www.susag.iastate.edu/</p> <p><i>Ներկայացվող ծրագրի համար օրինակելի կրթական մոդելներից է:</i></p>	<p>Մագիստրոսի (MS) կամ գիտությունների թեկնածուի (PhD) գիտական աստիճան կայուն գյուղատնտեսություն մասնագիտությամբ</p> <p>MS-ը հնարավոր է նաև համատեղել այլ մագիստրոսական ծրագրերի հետ՝ մագիստրոսի կրկնակի աստիճան ստանալու համար:</p> <p>Ծրագրի առանձնահատկություններից մեկն այն է, որ նախքան դիմելը ուսանողները պետք է իրենց համապատասխան պրոֆեսոր ընտրեն և ստանան նրա համաձայնությունը: Բացի այդ, նրանք պետք է նախորոք ուսումնասիրեն կրթական ծրագրերը և իրենց համար մասնագիտական զարգացման ծրագիր/պլան կազմեն:</p> <p>Միաժամանակ դիմումի հետ հարկ է ներկայացնել երեք երաշխավորագրեր:</p>	<p>Մագիստրոսի աստիճան ստանալու համար անհրաժեշտ է հավաքել 36 կրեդիտ՝ միջինը երեք տարվա ընթացքում, իսկ PhD-ն տևում է միջինը հինգ տարի, համապատասխանաբար 77 կրեդիտով: Երկու դեպքում էլ առարկաները նույնն են՝</p> <ul style="list-style-type: none"> ▪ Ագրոէկոհամակարգի հետազոտություն, ▪ Կայուն գյուղատնտեսության հիմքերը, ▪ Կայուն գյուղատնտեսության կոլոքիում, ▪ Վիճակագրական մեթոդներ, ▪ Միջդիսցիպլինար դասընթացներ, ▪ Կամրնտրական առարկա, ▪ Հետազոտության հիմունքներ: <p>https://catalog.iastate.edu/azcourses/susag/susag.pdf</p> <p>Բացի այդ, ուսանողները մագիստրոսական կամ թեկնածուական թեզ են կազմում:</p>	<p>Համալսարանը դիմորդներին առաջարկում է տարեկան 10 մասնագիտական զարգացման դրամաշնորհներ՝ առավելագույնը 600\$-ի չափով: Բացի այդ, ուսանողները 9-12 ամսով ներգրավվում են որպես տվյալ ստորաբաժանման ասիստենտներ և դրա դիմաց ամսական կրթաթոշակ ստանում, որը ներառում է վարձի փոխհատուցում (PhD-ների դեպքում 100, իսկ MS-ի դեպքում՝ 50 %-ով) և բժշկական ապահովագրության ծախսեր:</p>



<p>2.</p>	<p>Վաշինգտոնի պետական համալսարան / ԱՄՆ</p> <p>http://css.wsu.edu/g-graduate-studies/graduate-certificate-in-sustainable-agriculture/</p>	<p>Հետբակալավրական աստիճանի վկայական կայուն գյուղատնտեսություն մասնագիտացմամբ</p> <p>Մեծ ուշադրություն է հատկացվում ուսանողների ինքնուրույնությանը, քանի որ նրանք են կազմում իրենց իսկ կրթական ծրագիրը:</p> <p>Տևողությունը՝ երեք կիսամյակ:</p>	<p>Վկայականը ստանալու համար անհրաժեշտ է հավաքել նվազագույնը 9 կրեդիտ: Երկու հիմնական թեմատիկ առարկաների խմբեր ապահովում են 6 կրեդիտ: Դրանք են.</p> <ul style="list-style-type: none"> ▪ Օրգանական և կայուն գյուղատնտեսության ժամանակակից հետազոտություններ, ▪ Կայուն պարենային համակարգերի գործնական ուսումնասիրություններ: <p>Մնացած 3 կրեդիտները կարող են ապահովվել արտահամալսարանական առարկաներից՝ կայուն գյուղատնտեսությանն առնչվող դիսցիպլիններից: Այդ նպատակով ուսանողներին նախապես տրամադրվում են համապատասխան առարկաների ցանկը:</p>	<p>Ծրագիրն հետաքրքրական է այնքանով, որ նախքան ընդունվելն ուսանողները պետք է ինքնուրույն կազմեն իրենց ուսումնական ծրագիրը երեք կիսամյակների համար և այն քննարկեն վկայականը տրամադրող հանձնաժողովի ղեկավարի հետ: Դիմել կարող են յուրաքանչյուր տարվա մարտի 1-ին, մայիսի 1-ին և հոկտեմբերի 15-ին:</p> <p>Ֆինանսավորում չի հատկացվում, իսկ դիմումներն ընդունելու համար գանձվում է 75\$:</p>
<p>3.</p>	<p>Մասաչուսեթսի համալսարան Ամհերստո / ԱՄՆ</p> <p>https://www.umass.edu/sustainsci/</p> <p><i>Ներկայացվող ծրագրի համար օրինակելի կրթական մոդելներից է:</i></p>	<p>Մագիստրոսի աստիճան - Կայունության գիտություններ / Կայուն գյուղատնտեսություն</p> <p>Ընդունելության կարգը և աշխատանքի ընդունվելու բարձր հավանականությունն այս ծրագրի հիմնական առավելություններից են:</p>	<p>Ծրագրի տևողությունը մեկ տարի է: Մասնակիցները ստանում են Կայունության գիտությունների մագիստրոսի գիտական կոչում՝ կայուն գյուղատնտեսություն մասնագիտությամբ:</p> <p>Նախատեսված է փոքր խմբերի համար, ուսանողերին տրամադրվում է անհատական խորհրդատվություն և կարիերայի զարգացման թրեյնինգներ: Շրջանավարտների 86 %-ն աշխատանքի են անցնում իրենց մասնագիտությամբ: Կայուն գյուղատնտեսությունը մեկն է կայունության թեմայով հինգ հնարավոր մասնագիտացումներից, որ կարելի է ընտրել: Քանի որ ծրագիրը տևում է մեկ տարի և սեմինարներով հագեցած է, ուսանողները մագիստրոսական թեզ չեն գրում: Բայց, կրթության պարտադիր մաս է պրակտիկական պետական, մասնավոր, ակադեմիական կամ հասարակական կազմակերպություններում,</p>	<p>Ընդունելության համար հարկավոր է երկու երաշխավորագիր ներկայացնել՝ մեկն ակադեմիական ոլորտից, մյուսը՝ այնպիսի կառույցից, որը երաշխավորում է շրջանավարտին աշխատանքով ապահովելը (նաև հասարակական հիմունքներով): Բացի այդ, դիմորդը պետք է դիմում-հիմնավորում ներկայացնի իր մոտիվացիաների վերաբերյալ:</p> <p>Դիմումներն ընդունելու համար գանձվում է 80\$: Մասաչուսեթսի տեղաբնակ ուսանողների համար մեկ տարվա ծրագրի արժեքը կազմում է մոտ 17.000, Մասաչուսեթսը ներառող Նոր Անգլիա շրջանի ուսանողների համար՝ մոտ 30.000, իսկ ոչ</p>



			որի համար ուսանողները կրեղիտներ են ստանում: Որոշ դեպքերում ուսումը կարող է տևել երկու տարի, օրինակ՝ եթե ուսանողը միաժամանակ աշխատում է: Մագիստրոսական ծրագրի առարկաները համալսարանի կայքէջում ներկայացված չեն:	տեղաբնակների համար՝ մոտ 35.000\$: Դրան գումարվում է շուրջ 800\$ այլ բնույթի վճարներ: Կրթաթոշակ չի տրամադրվում:
4.	Կալիֆորնիայի համալսարան (UCDAVIS) /ԱՄՆ https://www.ucdavis.edu/majors/sustainable-agriculture-and-food-systems	Կայուն գյուղատնտեսություն և պարենի համակարգեր – Մագիստրոսի աստիճան Դասավանդվող առարկաների հիմքում կայունության երեք ուղղություններին (հասարակություն, տնտեսություն և շրջակա միջավայր) վերաբերող ասպեկտներն են:	Ուսանողները հաճախում են համալսարանի ութ ստորաբաժանումների կողմից առաջարկվող 24 տարաբնույթ առարկաների սեմինարների ու գործնական թրեյնինգների: Առարկաները բաշխված են հետևյալ երեք թեմատիկ խմբերում՝ <ul style="list-style-type: none"> ▪ Գյուղատնտեսություն և էկոլոգիա, ▪ Պարեն և հասարակություն, ▪ Տնտեսություն և քաղաքականություն: Պրակտիկական ծրագրի կարևոր մասերից է: Կրթական ծրագիրը և առարկաների ցանկը հասանելի են այստեղ. https://ucdavis.pubs.curricunet.com/Catalog/saf	Ուսման տարեկան վարձը կազմում է 28.000-ից 66.000\$: Համալսարանն ուսանողներին տրամադրում է կրթաթոշակ և ուսման վարձի փոխհատուցման Տարատեսակ հնարավորություններ:
5.	Միչիգանի պետական համալսարան / ԱՄՆ https://safss.msu.edu/	Կայուն գյուղատնտեսություն և պարենային համակարգեր – Մագիստրոսի աստիճան Ծրագրի առանցքում կայունության երեք ուղղություններն են՝ շրջակա միջավայր, հասարակություն և տնտեսություն: Մեծ ուշադրություն է հատկացվում գործնական գիտելիքի ձեռքբերման վրա: Տնողությունը՝ երեք կիսամյակ:	Ծրագրի մասնակիցները հնարավորություն ունեն տեսական և գործնական գիտելիք ստանալ երեք հիմնական թեմատիկ խմբերում բաշխված առարկաների շրջանակներում: Այդ խմբերն են. ա/ Կայուն գյուղատնտեսության և պարենային համակարգի առանձնահատկությունները, սոցիալ-մշակութային գործոնների ազդեցությունը պարենի և գյուղատնտեսության վրա, բ/ Կայուն տնտեսվարման և պարենային անվտանգության դաշտային կուրս՝ նպատակ ունի դաշտային այցերի և գործնական աշխատանքի արդյունքում պարզել պարենի և գյուղատնտեսության միջդիսցիպլինար բնույթը,	Թեզի թեմաներն ընտրվում են բ/ և գ/ թեմաների խմբից: Թեզի դաշտային մասի իրագործման համար տրամադրվում է մասնակի ֆինանսավորում:



			<p>զ/ Կայուն գյուղատնտեսության և պարենի անվտանգության տեսական և գործնական գիտելիքի ինտեգրացիա և սինթեզում. նպատակն է բացահայտել պարենի արտադրության բիոգեոքիմիական ասպեկտները՝ հաշվի առնելով ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և սոցիալական կոնտեքստը:</p>	
<p>6.</p>	<p>Բոլոնիայի համալսարան / Իտալիա</p> <p>https://corsi.unibo.it/2cycle/PreciseSustainableAgriculture?utm_source=Keystone&utm_campaign=Keystone&utm_medium=KeystoneListing</p> <p><i>Այս համալսարանի դասախոսների հետ առկա են ակտիվ կապեր:</i></p>	<p>Մագիստրոսի կոչում ճշգրիտ և կայուն գյուղատնտեսություն մասնագիտությամբ</p> <p>Տևողությունը՝ երկու տարի: Ուսուցումն՝ անգլերենով:</p> <p>Ծրագրի շրջանակներում ներդրվել են հեռավար ուսուցման և քննությունների ընդունման օրինակելի մոդելներ:</p>	<p>Ինտերդիսցիպլինար այս ծրագրի նպատակն է կրթել ու թիրախավորել հիմնականում գյուղատնտեսներին: Ուսանողներին առաջարկվում են տարբեր առարկաներ՝ նրանց տեխնոլոգիական նորարարությունների, գյուղատնտեսական ինելաջի համակարգերերի, ճշգրիտ գյուղատնտեսության, ջրային ռոսուրսների կառավարման, բույսերի պաշտպանության, կայուն բիոտեխնոլոգիաների, ինչպես նաև ոլորտին առնչվող տնտեսական և քաղաքական նորարարությունների վերաբերյալ գիտելիք տրամադրելու նպատակով: 2020/21 թթ. ուսումնական պլանը ներկայացված է այստեղ՝ file:///C:/Users/User/Downloads/Precision%20And%20Sustainable%20Agriculture%20-%20Course%20Structure%20Diagram.pdf իսկ յուրաքանչյուր կիսամյակի կրթական նպատակներն՝ այստեղ՝ file:///C:/Users/User/Downloads/Precise%20And%20Sustainable%20Agriculture%20-%20Educational%20Objectives.pdf Ընդհանուր առարկաներից գատ, երկրորդ ուսումնական տարվա համար ուսանողները պետք է ընտրեն բուսաբուծության կամ անասնաբուծության ծրագիրը՝ մասնագիտանալու նպատակով:</p>	<p>Դիմելու համար անհրաժեշտ է ունենալ առնվազն բակալավրի աստիճան և անգլերենի իմացության B2 մակարդակ: Համալսարանն առաջարկում է նաև դիմելու և ներգրավվելու համար նախապատրաստական դասընթացներ:</p> <p>Ուսուցումը վճարովի է, ուսման վարձի չափը որոշվում է յուրաքանչյուր կրթական տարվա սկզբին: Օրինակ, 2020 թ. համար այն կազմում է շուրջ 23.000 EUR: Սյոուհանդերձ, ամեն ուսանողի համար վարձավճարի չափը անհատական է սահմանվում՝ նրա տնտեսական-ֆինանսական վիճակին համապատասխան (ISEE - Equivalent Economic Situation Indicator):</p> <p>Ավարտական քննության համար գրանցման արժեքը 32 EUR է:</p>



			Բացի այդ, ուսանողներն անցնում են պրակտիկա և ներկայացնում մագիստրոսական թեզ: Ծրագրի ավարտին ուսանողները պետական քննություն են հանձնում, որի ընթացքում ներկայացնում են նաև մագիստրոսական թեզի արդյունքները:	
7.	Պատվայի համալսարան /Բոսալիա https://en.didattica.unipd.it/off/2020/LM/AV/AV2293/000ZZ/AVP5073537/NO	Մագիստրատուրա (MSc) Կայուն գյուղատնտեսություն և պարենի անվտանգություն մասնագիտությամբ Ծրագրի տևողությունը 2 տարի է՝ ամբողջական ծանրաբեռնվածությամբ: Ուսուցումն՝ անգրեթե անվճար:	Առաջին տարվա ընթացքում առաջարկվում են հետևյալ առարկաները. <ul style="list-style-type: none"> ▪ Ագրոպարենային տնտեսագիտություն և քաղաքականություն, ▪ Կայուն գյուղատնտեսություն, ▪ Գյուղատնտեսության կառավարում և բիոբիմիական ցիկլեր, ▪ Վարակների ինտեգրված կառավարում ▪ Բուսաբուծություն, ▪ Ճշգրիտ ֆարմիզ/տնտեսվարում, ▪ Հողի միկոբիոլոգիա, ▪ Վիճակագրություն: Իսկ երկրորդ տարվա ընթացքում՝ <ul style="list-style-type: none"> ▪ Հիվանդությունների կայուն կառավարում, ▪ Բույսերի ֆիզիոլոգիա, ▪ Կայուն անասնապահական համակարգեր, ▪ Բույսերի պաշտպանության միջոցների կայուն կիրառություն, ▪ Կայուն խաղողագործություն և ծառատեսակների արտադրություն, ▪ Ջրային ռեսուրսների կառավարում: Առարկաների վերաբերյալ մանրամասները ներկայացված են այստեղ՝ https://en.didattica.unipd.it/off/2020/LM/AV/AV2293/000ZZ/AVP5073537/NO	Ուսուցումը վճարովի է, ուսման վարձը 2.600 EUR է՝ մեկ ուս. տարվա համար: Ընդունելության համար պարտադիր պայման է բակալավրում բարձր առաջադիմությունը և անգլերենի գերազանց իմացությունը:
8.	Մալոնիկի միջազգային Հեյլենիկ	Մագիստրատուրա (MSc) Կայուն գյուղատնտեսություն և բիզնես մասնագիտությամբ	Բնտերդիսցիպլինար ծրագիր է, որի առանցքում հատկապես կայուն զարգացման տնտեսական ուղղությունն է: Հիմնական թեմաներն են.	Ուսուցումը վճարովի է, ուսման վարձը 4.000 EUR է՝ մեկ ուս. տարվա համար:



	<p>համալսարան / Հունաստան</p> <p>https://www.masterstudies.com/universities/Greece/IHU/</p>	<p>Ծրագրի տևողությունը 18-30 ամիս է, ուսումը՝ անգլերենով:</p> <p>Հնարավոր է ուսանել ամբողջական (1,5 տարի) կամ կես ծանրաբեռնվածությամբ (2,5 տարի) (full- or part-time):</p> <p>Ծրագրի շրջանակներում ուսանողները մասնակցում են գործնական խորհրդատվական ծրագրի, որն իրականացվում է ծրագրի գործընկեր գյուղատնտեսական կազմակերպությունների հետ համատեղ:</p>	<ul style="list-style-type: none"> ▪ Ավելացնել գյուղատնտեսության արդյունավետությունը՝ նվազեցնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը, ▪ Տարբեր չափերի գյուղատնտեսական կազմակերպությունների զարգացում և կառավարում, ▪ Գյուղատնտեսական մթերքների մարքեթինգ և շուկաներ: <p>Այս թեմաների շրջանակներում համալսարանն առաջարկում է տարաբնույթ հիմնական և կամընտրային առարկաներ:</p> <p>Ուսանողները գրում են նաև մագիստրոսական աշխատանք, որոնց թեմաները առաջարկվում են համապատասխան ֆակուլտետի կողմից:</p>	<p>Ընդունվելու համար հարկ է ներկայացնել երկու ակադեմիական երաշխավորագիր: Հնարավոր է, որ ընդունելության համար անցկացվի նաև անհատական հարցազրույց:</p>
<p>9.</p>	<p>Բրիտանական Ռոյալ գյուղատնտեսության համալսարան / Մեծ Բրիտանիա</p> <p>https://www.rau.ac.uk/sites/files/rau/field_document/Programme%20Specification%20-%20MSc%20Sustainable%20Agriculture%20and%20Food%20Security.pdf</p> <p><i>Ներկայացվող ծրագրի համար օրինակելի</i></p>	<p>Մագիստրատուրա (MSc) Կայուն գյուղատնտեսություն և պարենի անվտանգություն մասնագիտությամբ</p> <p>Ծրագրի տևողությունը 1 տարի է՝ ամբողջական կամ 2 տարի՝ կես ծանրաբեռնվածությամբ: Ծրագրի նպատակն է կրթել հանրային և քաղաքական ոլորտի մասնագետների, ովքեր կարող են ազդել կայուն գյուղատնտեսությանը և պարենի անվտանգությանն առնչվող գլոբալ որոշումներ կայացնելու գործընթացի վրա:</p> <p>Մասնակիցները գիտելիք և հմտություններ են ստանում չորս մակարդակներում.</p>	<p>Հիմնական առարկաներն են.</p> <ul style="list-style-type: none"> ▪ Ինտեգրված գյուղատնտեսական համակարգեր, ▪ Հողի և ջրի կայուն կառավարում, ▪ Գիտական ծրագրերի կազմում, ▪ Գյուղատնտեսության և տարածքային քաղաքականություն, ▪ Աղքատություն և պարենի անվտանգություն, ▪ Միջազգային տարածաշրջանային զարգացում: <p>Եվ երեք կամընտրական առարկաներ այս ցանկից.</p> <ul style="list-style-type: none"> ▪ Բնական ռեսուրսների կառավարում, ▪ Կլիմայական փոփոխություն և զարգացում, ▪ Կայուն գյուղատնտեսական ենթակառուցվածքներ, ▪ Փոքր տնտեսավարողներ և լոկալ պարենի Շղթաներ, 	<p>Ընդունելությունն անցկացվում է հարցազրույցով, համապատասխան աշխատանքային փորձը, ակադեմիական որակավորումը և գերազանց անգլերենի իմացությունը կարևոր նախապայման են:</p> <p>2020/21 թթ. ակադեմիական տարվա վարձը Մեծ Բրիտանիայի և ԵՄ ուսանողների համար կազմում է 8.160 ֆունտ իսկ մյուսների համար՝ 12.240 ֆունտ:</p> <p>Համալսարանը տրամադրում է կրթաթոշակի տարաբնույթ հնարավորություններ:</p>



	<p><i>կրթական մոդելներից է:</i></p>	<ul style="list-style-type: none"> ▪ Մասնագիտական գիտելիք, ▪ Ինտելեկտուալ հմտություններ, ▪ Գործնական-մասնագիտական հմտություններ, ▪ Այլ հմտություններ, օրինակ՝ հաղորդակցվելու, միջանձնային, ինքնուրույն սովորելու կարողություն և այլն: 	<ul style="list-style-type: none"> ▪ Ինտեգրված օրգանիկ համակարգեր: 	
<p>10.</p>	<p>Չեխիայի կենսագիտությունների համալսարան /Չեխիա</p> <p>https://www.af.czu.cz/en/</p>	<p>Մագիստրատուրա (MSc) Կայուն գյուղատնտեսություն և պարենի անվտանգություն մասնագիտությամբ</p> <p>Ծրագրի տևողությունը 2 տարի է՝ ամբողջական ծանրաբեռնվածությամբ: Ուսուցումն՝ անգրեթե անվճար:</p>	<p>Ծրագրի նպատակն է ուսանողներին գիտելիք տրամադրել կայուն ագրոհամակարգերի վերաբերյալ: Շրջանավարտներն ի վիճակի կլինեն հատկապես քննադատորեն գնահատել ագրոհամակարգերի բնապահպանական և սոցիալական ասպեկտները: Բիոքիմիայի, բույսերի և կենդանիների ֆիզիոլոգիայի և նմանատիպ այլ առարկաների ուսուցումը ուսանողներին հնարավորություն կտա հասկանալու և ներդնելու գյուղատնտեսության վարման և պարենի անվտանգության ժամանակակից տեխնոլոգիաներ: Առարկաների ամբողջական ցանկը ներկայացված է այստեղ. https://www.af.czu.cz/en/r-9372-study/r-9480-study-programmes/r-10676-master-s-study-programmes/r-10680-sustainable-agriculture-and-food-security</p> <p>Ծրագրի ավարտին ուսանողները հանձնում են պետական քննություն հետևյալ առարկաներից.</p> <ul style="list-style-type: none"> ▪ Բույսերի մասին գիտություն, ▪ Կենդանիների մասին գիտություն, ▪ Պարենի որակ և անվտանգություն: <p>Ուսանողները գրում են նաև մագիստրոսական աշխատանք:</p>	<p>Ուսուցումը վճարովի է, ուսման վարձը 80.000 CZK-Չեխական Կրոնա է՝ մեկ ուս. տարվա համար (մոտ 3.000 EUR):</p>



Ծրագրի շրջանակը

<u>Որակավորումը՝</u>	Շրջակա միջավայրի մագիստրոս
<u>Տնտեսությունը՝</u>	Երկու կիսամյակ
<u>Ծրագրի լեզուն՝</u>	Հայերեն
<u>Ակրեդիտացիա՝</u>	Դիպլոմը տրամադրվում է ՀԱԱՀ-ի կողմից, վերահավատարմագրված է Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն ՈԱԱԿ հիմնադրամի կողմից, որը գրանցված է Որակի ապահովման եվրոպական ռեգիստրում (EQAR) ու 2017թ.-ից հանդիսանում է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ENQA) լիիրավ անդամ:
<u>Կայքէջ՝</u>	https://anau.am/education/master-studies/
<u>Տեղեկատվական թերթիկ՝</u>	(նախատեսվում է):

Ծրագրի բովանդակությունը և ձևաչափը՝ ըստ կիսամյակների

Մագիստրոսական ծրագիրը բաղկացած է կայուն գյուղատնտեսությանն առնչվող 7 հիմնական թեմաների խմբերից, որոնցից յուրաքանչյուրը ներկայացվելու է համապատասխանաբար որպես սեմինարների, դասախոսությունների ու թրեյնինգների առանձին շարք: Հիմնական թեմաները համապատասխանում են կայուն զարգացման երեք ուղղություններին. առողջ շրջակա միջավայր, կայուն տնտեսական աճ, սոցիալական համերաշխություն: Այս հանգամանքը ծրագրի մասնակիցներին կայուն գյուղատնտեսության զարգացման նորարարական մոտեցումներն ընկալելու բացառիկ հնարավորություն կտա: Բացի մասնագիտական գիտելիքից մասնակիցները կունենան նաև հավելյալ հմտություններ ստանալու հնարավորություն, որը կիրականացվի 2 լրացուցիչ թեմաների խմբերի միջոցով¹:

Ստորև ներկայացվում է *հիմնական* և *լրացուցիչ* թեմաների Խմբերի (ԹԵԽ) բովանդակությունը, դրանք ներառող մոդուլների² և կրեդիտների թվի³ բաշխվածությունն ըստ կիսամյակների՝

¹ Տես Կալիֆորնիայի համալսարանի օրինակը:

² Մոդուլում ներառված յուրաքանչյուր առարկա ավարտվում է գիտելիքի պարտադիր ստուգմամբ:

³ Ընդհանուր 60 կրեդիտի հաշվով:



ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ /33 կրեդիտ/	
Կիսամյակը կմեկնարկի ընտրված մասնակիցների հետ կայուն գյուղատնտեսության և այլ կարևոր եզրույթների բովանդակության մեկնաբանությամբ և քննարկմամբ: Այդ եզրույթները կդիտարկվեն ինչպես տեղական, այնպես էլ համաշխարհային զարգացման համատեքստում: Հաջորդիվ ներկայացվող ԹԵԽ-երի ամբողջությունն արտացոլում է կայուն գյուղատնտեսության շրջանակի բովանդակությունն իր ամբողջ ներկայակով:	
<i>ԹԵԽ-1-ը և ԹԵԽ-2-ը վերաբերում են կայուն զարգացման երեք ուղղություններից առողջ շրջակա միջավայրին.</i>	
ԹԵԽ-1. Կայուն ագրոէկոհամակարգեր /6 կրեդիտ/	
Մոդուլներ.	
<ul style="list-style-type: none"> ▪ Ագրոէկոլոգիա և կենսաբազմազանության կայուն կառավարում, ▪ Գյուղատնտեսական լանդշաֆթների կայուն կառավարում և ագրոանտատային համակարգեր, ▪ Օրգանական գյուղատնտեսություն՝ տեսություն և պրակտիկ ներդնում: 	
Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության, կենդանիների մթերատվության և հողերի բերրիության բարելավման նորարարական մեթոդներ և գործընթացներ, որոնք կլիմայի, հողի, ջրի, օդի, կենսաբազմազանության և մարդու առողջության վրա նվազագույն վնասակար ազդեցություն ունեն: Այս ԹԵԽ-ի շրջանակներում կքննարկվեն հողերի դեգրադացիայի, ջրերի աղտոտվածության, անտառահատումների, բուսական և կենդանական կենսաբազմազանության ոչնչացման կանխմանն ուղղված հիմնախնդիրներ և դրանց լուծման նորարարական մեթոդներ ու մոտեցումներ:	
ԹԵԽ-2. Բնական ռեսուրսների ինտեգրված կառավարում և կլիմա /8 կրեդիտ/	
Մոդուլներ.	
<ul style="list-style-type: none"> ▪ Բնական ռեսուրսների ինտեգրված կառավարում, ▪ Պարենի կորուստների նվազեցում և թափոնների կայուն կառավարում, ▪ Բիոէկոնոմիա և կանաչ էներգիա, ▪ Կլիմայի փոփոխություն և գյուղատնտեսություն: 	



Չվերականգնվող աղբյուրներից ստացվող գյուղատնտեսական արտադրության միջոցների (հատկապես վառելիքի) օգտագործումը նվազեցնելու և դրանք վերականգնվող ռեսուրսներով ու միջոցներով փոխարինելու մեխանիզմներ: ԹԵԽ-ում ներկայացվելու են բիոհիմքով հանքանյութի ու այլընտրանքային էներգիայի ստացման, բիոկենսատեխնոլոգիաների արդյունավետ կիրառման, ինչպես նաև պարենի կորուստների ու թափոնների ծավալի կրճատման և դրանց լիարժեք օգտագործման



<p>հարցեր: Այս ԹԵԽ-ի շրջանակներում կքննարկվեն նաև մարդահարույց կլիմայական փոփոխության կանխմանն ու ադապտացիային ուղղված հարցեր:</p>
<p><i>ԹԵԽ-3 –ը և ԹԵԽ-4-ը վերաբերում են կայուն զարգացման երեք ուղղություններից սոցիալական համերաշխությունը.</i></p>
<p>ԹԵԽ-3. Ազրոսոցիոլոգիա և գյուղական տարածքների կայուն զարգացում /6 կրեդիտ/</p>
<p>Մոդուլներ.</p>
<ul style="list-style-type: none"> ▪ Պարենի և գյուղատնտեսական համակարգերի սոցիոլոգիա,
<ul style="list-style-type: none"> ▪ Լոկալ/ավանդական գիտելիքի համակարգեր և սննդի մշակույթ,
<ul style="list-style-type: none"> ▪ Գյուղական տարածքների կայուն զարգացման մեխանիզմներ:
<p>Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների լոկալ/ավանդական գիտելիքի, կարողությունների արժևորում և կիրառում հանրության համընդհանուր բարօրությանն ու առողջ ապրելակերպի կոնցեպտներ մշակելու գործում: Այս ԹԵԽ-ը միտված է գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների սոցիալ-մշակութային արժեքների համակարգն ուսումնասիրելուն, նրանց իրական կարիքներն ու պահանջումները գնահատելուն և գյուղական տարածքների կայուն զարգացման ռազմավարություն ձևավորելուն:</p>
<p>ԹԵԽ-4. Կայուն ազրոպարենային համակարգեր /9 կրեդիտ/</p>
<p>Մոդուլներ.</p>
<ul style="list-style-type: none"> ▪ Պարենային անվտանգություն և ինքնիշխանություն,
<ul style="list-style-type: none"> ▪ Սննդի անվտանգություն և առողջ հասարակություն,
<ul style="list-style-type: none"> ▪ Աղքատություն հաղթահարման և բնակչության խոցելիության նվազեցման մեխանիզմներ,
<ul style="list-style-type: none"> ▪ Գյուղատնտեսական ապահովագրական համակարգեր:
<p>Հասարակության և ապագա սերունդների սննդապահովման և պարենային անվտանգության հայեցակարգերի, մեթոդների ու մոտեցումների ուսումնասիրություն, ազգաբնակչության թեր- և գերսնուցման հիմնախնդիրները լուծելու ուղիների մշակում: Գյուղատնտեսության ոլորտի ռիսկայնության նվազեցման համակարգեր, բնական աղետներից (օրինակ՝ կլիմայով պայմանավորված) ինչպես նաև սոցիալ-տնտեսական գործոնների բացասական ազդեցությունից (օրինակ՝ ուժեղ գնային տատանումներից) ապահովագրություն: Այս ԹԵԽ-ի շրջանակներում կքննարկվեն նաև աղքատություն հաղթահարման և բնակչության խոցելիության նվազեցման հիմնահարցեր, օրինակ՝ թագավարակի ազդեցության համատեքստում:</p>
<p>ԹԵԽ-5. Գյուղատնտեսական հետազոտությունների հիմունքները և ակադեմիական անգլերեն (որպես լրացուցիչ ԹԵԽ) /4 կրեդիտ/</p>



Մոդուլներ.
<ul style="list-style-type: none"> ▪ Գյուղատնտեսական հետազոտությունների հիմունքներ, ▪ Ակադեմիական անգլերեն:
<p>Էմպիրիկ հետազոտություն իրականացնելու մեթոդներ և ակադեմիական տեքստեր կազմելու հմտություններ և ակադեմիական անգլերեն: Հիմնական շեշտը կդրվի նաև մագիստրոսական թեզի կազմման նախապատրաստական աշխատանքների վրա:</p>
<p>Երեքշաբաթյա պրակտիկա /3 կրեդիտ/ Ուսանողները կներգրավվեն ՀԱԱՀ-ի գործընկերների պետական, մասնավոր և միջազգային գործնական ծրագրերում՝ իրենց թեզի կազմման համար հետազոտություն իրականացնելու նպատակով:</p>
<p>ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՍՅԱԿ <i>/19 կրեդիտ/</i></p>
<p><i>ԹԵԽ-6-ը վերաբերում է կայուն զարգացման երեք ուղղություններից սոցիալական համերաշխությանը.</i></p>
<p>ԹԵԽ-6. Կայուն գյուղատնտեսության սոցիալական հիմունքները /4 կրեդիտ/</p>
Մոդուլներ.
<ul style="list-style-type: none"> ▪ Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների սոցիալական պաշտպանվածության մեխանիզմներ, ▪ Միջազգային կազմակերպությունների⁴ հայեցակարգերի ու ռազմավարությունների ուսումնասիրություն:
<p>Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածներին արժանապատիվ աշխատանքով ապահովելու և նրանց կյանքի պայմանները բարելավելու հայեցակարգերի ու ռազմավարությունների ուսումնասիրություն: Սոցիալական երաշխիքների մեխանիզմի և սերունդների համերաշխության սկզբունքի ներդրում գյուղատնտեսության ոլորտում:</p>
<p><i>ԹԵԽ-7-ը և ԹԵԽ-8-ը վերաբերում են կայուն զարգացման երեք ուղղություններից կայուն տնտեսական աճին.</i></p>
<p>ԹԵԽ-7. Գիտելիքահեն գյուղատնտեսություն և կայուն զարգացում /4 կրեդիտ/</p>
Մոդուլներ.
<ul style="list-style-type: none"> ▪ Գիտելիքահեն գյուղատնտեսության մոդելներ, ▪ Կայուն տնտեսական զարգացում և աճ:

⁴ ILO, UNICEF, WorldVision, IUF և այլն:



Կայուն տնտեսական աճի ապահովում և սննդամթերքի կայուն արտադրություն, վերամշակում ու մատակարարում - գիտելիքահեն գյուղատնտեսության անցման մեխանիզմներ:
ԹԵԽ-8. Ներառական արժեշտներ և տարածքային կայուն ինստիտուտներ /5 կրեդիտ/
Մոդուլներ.
<ul style="list-style-type: none"> ▪ Ներառական արժեշտներ, ▪ Գյուղատնտեսական կոոպերատիվներ և տարածքային կայուն ինստիտուտներ:
Գյուղատնտեսական կոոպերատիվների և արժեքային շղթայի երկայնքով տարբեր մասնագիտական միությունների ձևավորման ու հզորացման գործընթացի կազմակերպում, որը միտված է տնտեսական ներառականության խրախուսմանը և գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների միջև վստահության բարձրացմանը: Տարածքային կայուն ինստիտուտներ և խոցելի խմբերի ներգրավման մեխանիզմներ:
ԹԵԽ-9. Գյուղատնտեսական նորարարական և խորհրդատվական համակարգեր: Թվայնացում (որպես լրացուցիչ ԹԵԽ) /6 կրեդիտ/
Մոդուլներ.
<ul style="list-style-type: none"> ▪ Գյուղատնտեսական նորարարական համակարգ, ▪ Գյուղատնտեսական տեղեկատվական և խորհրդատվական համակարգեր, ▪ Թվայնացում, ապագայի տեխնոլոգիաներ և կայուն գյուղատնտեսություն:
Գիտելիքի/փորձի փոխանակման և տեղեկատվության տարածման մեթոդներ, գյուղատնտեսական նորարարական և խորհրդատվական համակարգեր և գյուղատնտեսության ոլորտի թվայնացման հիմնահարցեր:

Մագիստրոսական աշխատանք /5 կրեդիտ/

Մագիստրոսական աշխատանքների թեմաները կընտրվեն հիմնական թեմատիկ խմբերից և կօգնեն լուծել գյուղատնտեսության կայուն զարգացմանն ուղղված այս կամ այն խնդիրը:

Ծրագրի այլ հնարավոր բաղադրիչներ

- Օտար լեզվի և մասնագիտական նախապատրաստական դասընթացներ, տես Բոլոնիայի համալսարանի օրինակը, որտեղ համալսարանն առաջարկում է դիմելու և ներգրավվելու համար նախապատրաստական դասընթացներ:
- Ամառային դպրոց Հումբոլդթի, Բոլոնիայի և այլ համալսարանների հետ: